

ԳՐԸ ԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՐՈՒԱԳԾԵՐ

19-ՐԴ ԴԱՐՈՒ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՅ Առաջին երեսնամեակ

Ինճիճեանի ու Գապատախալեանի ժամանակակից է ԳՐԻԳՈՐ ՓԵՇՏՏԻՄՈՒՃԵԱՆ († 1837), որի բանաստեղծութիւնը զուտ կրօնական է: Կենսագրութիւնն ինձ յայտնի չէ: Եղել է մեծիմաստ պատուելի վարժապետ, Կ. Պոլսում, — և այսքանն էլ բաւական է: Իբրեւ վարժապետ յօրինած ունի դասագրքեր՝ Քերականութիւն (Կ. Պոլիս 1829), Տրամաբանութիւն (Երուսաղէմ 1854), Լուսաշաւիղ, որ է բացատրութիւն Նիկիական հանգանակին» (Կ. Պ. 1848) և նոյն իսկ Բառգիրք Հայկազեան լեզուի. ունի և մի բանաստեղծական երկ «Փիմառնութիւն» (Կ. Պ. 1845): Մահից յետոյ կատարուած այս տպագրութիւնները ցոյց են տալիս, որ նա յարգանք ու հեղինակութիւն է վայելել իւր աշակերտներին մէջ. և իսկապէս մեծ անուն է ունեցել Փէշտիմալճեանը: Գերմանացի բողոքական քարոզիչները մինչև այժմ մեծ դովեւտով են խօսում նրա մասին՝ անուանելով նրան հայ Երազմոս¹⁾, որ իբր իսկապէս բողոքականութեան է դարձած եղել, ծածուկ մասնակցել է նրանց ժողովներին և իբր մինչև իւր մահը հաւատարիմ բարեկամ է եղել Աւետարանական եկեղեցուն, թէպէտ և երբեք օրիութիւն չի ունեցել հրապարակով ինքն իրեն բողոքական խոստովանելու: — Այս պատմութիւնը ցոյց է տալիս միայն, որ Փէշտիմալճեան պատուելին քարացած մարդ չի եղել. հետաքրքրուել է Հայոց եկեղեցուց դուրս եղած բաներով, եկեղեցական վերանորոգութեան խնդրով և շատ հառու է եղել իւր ժամանակակիցների հալածասիրական ոգուց: Լինելով ջերմ կրօնասէր, նա ծարաւի է եղել կենդանի ոգու և գուցէ կարծել է, թէ այդ կը գտնի բողոքականների ժողովներում: Բայց որ նա բողոքականութեան յարած լինի, այդ հաւանական չէ: Այդ ժամանակ ով որ հայոց եկեղեցուց կաթողիկոսների կամ բողոքականների հետ յարաբերութիւն էր ունենում, թէկուզ արտաքին, համարուում է կաթողիկ կամ բողոքական և հալա-

1) Mission und Evangelisation im Orient. 1908. եր. 76. Տեղեկութեան համար շնորհական եմ իմ աշակերտ պ. Գալ Իսքենդրեանից:

ծանքի ենթարկւում. նոյն սխալ հայեայքն, ինչպէս երևում է, ունեցել են և ժամանակի բողոքական քարոզիչները՝ բողոքական համարելով նրանց, որոնք իրենց մօտ գնացել եկել են: Յայտնի է Մատթէոս պատրիարքի նեարդային աններող վերաբերմունքը դէպի կաթողիկոսներն ու մասնաւորապէս դէպի բողոքականները. իսկ արդ նա փէշտիմալճեանի յարգողներից մէկն է եղել և նրա «սրտի իղձը» կատարելու համար՝ նրա մահից ութ տարի յետոյ 1845 թուին Վ. Պոլսում տպագրել է տալիս նրա «ցանկալի մատեանը», որ է «Գիմառնութիւն ի չարչարանս Քրիստոսի Փրկչին մերոյ», և այս՝ «յօդուտ ազգիս»:

Այս գրքի մէջ, բայց փէշտիմալճեանի վերոյիշեալ գլխաւոր աշխատանքից, ղետեղութեամբ են իբրև մի չորրորդ մաս նաև նրա տասնութեց «մազթանքներն առ Աստուած և առ սուրբս նորա»: Դրանք աղօթական տաղեր են, որ հեղինակն «աղերս» է անուանում, և որոնց մէջ առանձնապէս աչքի է ընկնում այն հանգամանքը, որ նրան գրաւում են ամենից աւելի հայ եկեղեցին և հայ ազգային սրբերը. ինչպէս՝ Ս. Էջմիածին, Լուսաւորիչ, Աբգար թագաւոր Հայոց, Տրդատ թագաւոր, Ս. Թարգմանիչը, Ներսէս Ծնորհալի, Վարդան Մամիկոնեան:

Փէշտիմալճեանն իւր բանաստեղծութեան վրայ նայում է նախ՝ իբրև վարժապետ. նա ոտանաւորներ է գրում «ի հրահանգութիւն մանկանց» իւր դպրոցի, որպէս զի նրանք իրենց վարժապետի օրինակներով վարժուին «ի յօրինութեան նմանատիպ գրուածոց»:

... Որք չեն վարժ ի յուսման

Քերթողական բանից չափման,

Կըրթին ի սոս գէթ անագան,

Իբր ի նըկար ինչ ու բուական:

Ապա՝ նրա հայեացքով բանաստեղծութիւնը մի բարեպաշտական գործ է, որ մանուկներին տալիս է կրօնական հագեւոր կրթութիւն և կարծում է, ճիշտ ինչպէս Նարեկացին, թէ իւր աշխատանքը հոգեւոր բժշկութիւն և առողջութիւն պիտի բերէ ընթերցողներին:

Այս հայեացքը ընականօրէն լիբերալութիւն է նրան նախ՝ «աղերսներ» գրել և ապա՝ իւր «աղերսների» մէջ բանեցնել բազմազան տաղաչափական ձևեր, որոնց մէջ, Էր. 245, աչքի է ընկնում «Աղերս առ ս. Խաչն աստուածընկալ», որ գրուած է Բագրատունուց առաջ Բագրատունու «Հայկական» կոչուած չափով: Մի անգամ որ այդ աղերսները այդպիսի ծագում ունին, այլ ևս զբանցից կարելի չէ պահանջել բանաստեղծութիւն. դրանք մեծ մասամբ միակերպ յօրինուած բաներ են, դիմում-

ներ սովորական նմանութիւններով. օրինակ Շնորհալու աղերսն այսպէս է սկսուում.

Աղբիւր ես բարի, կենաց լիտակի

Որպէս եղջերու փափագի,

Հոգիս ծարաւի:

Ճրագ լուսարիի, Արամեանս ազգի.

Յուացո՛ւ ըզլոյս քո պայծառ,

Աչացս իմ սրտի:

Այսպէս և Շնորհալուն կոչում է՝ ոստ գաւաղանի, ծաղիկ նապելի, ուռ ողկուղալի, երկիր բերրի, պարարտ ձիթենի, լեռան կնդրի, մառան բարելի և այլն, և այդ նմանութիւններին համապատասխան մէկ մէկ խնդրուածքներ անում նրանից:

Նման ձևով գովում է և Էջմիածինը, — «Աղբոս առ շնորհածին ծնողն մեր Սուրբ Էջմիածին».

Լուսակերտ խորան փառաց՝

Երկնաւորին,

Կառուցեալ յԱրարատեան

Մեծի դաշտին.

Սեպհական պարծանք ազգիս.

Պրսակ անգին,

Դու լէ՛ր միշտ պատըսպարան

Իմոյս անձին. և այլն:

Փէշտիմալճեանի երկերը ժամանակի կրօնական պահանջին բաւարարութիւն տալու են սահմանուած: Խրիմեան Հայրիկը պատմում էր, թէ ժամանակակից պատրիարքներից մէկը (անունը մոռացել եմ) մի անգամ ասել է Գրիգոր պատուելիին, թէ ամեն սրբերի գովելիւր ու աղօթելիւր, մեր ու Թաղէոս Առաքեալին ինչո՞ւ մոռացել ես: Պատուելին պատասխանում է, թէ Թաղէոս Առաքեալը շատ հեռու է ընկած, ուստի միտք չի եկել նա: Բայց մի քանի օրից յետոյ նա բերում է և Հայաստանեայց առաքեալի աղերսը, որի սկիզբն է՝ «Առաւօտ լուսաբեր Հայաստան երկրի, Թաղէոս առաքեալ, ընդէ՛ր կաս հեռի»: Աղերսը հաւանութիւն է գտնում, եղանակ յարմարեցւում նրան և երգւում: Եւ Գրիգոր պատուելիի բաղմաթիւ աղերսներից այդ մէկը, որ չի առնուած նրա Գիմառնութեան մէջ, իւր եղանակի պատճառով տպրում է մինչև այժմ իբրև երգ: Խրիմեան Հայրիկի սիրած տաղերից մէկը դա էր:

Փէշտիմալճեանին և նրա հոգանքով ընթացողներին անշուշտ եկեղեցուց և սրբերից շատ աւելի մեծ ոգևորութեան նիւթ պիտի տար և աւետարանական պատմութիւնը, որին նուիրուած

է մեր այս քերթողի «Դիմաւանութիւնը», գրուած 1820 թուականի մօտերը: Այս երկը, որի մէջ մի քանի հատուածներ դարձեալ ջերմ աղօթքի կերպարանք ունին, համեմատաբար աւելի բարձր է քան աղերսները. բայց և այնպէս սա ևս բանաստեղծական յղացման արդիւնք չէ: Եթէ Ինճիճեանը ոտանաւորով աշխարհագրութիւն է անում, Փէշտիմալճեանը մի բանաստեղծական կրօնագիտութեան ղիլք է գրում Քրիստոսի անօրէնութեան վրայ, որի մէջ ոտանաւորով պատմուած և մեկնուած էն Փրկչի շարջարանքը, խաչելութիւնը և այլն, հետը միացրած և չին Կտակարանից ակնարկներ և նոյն իսկ աւանդութիւններ: Լինելով մեր վերածնութեան շրջանի միմիայն ներքին հոգևոր ուղղութեան արտայայտիչ, առանց եւրոպական ազդեցութեան, նա մտածում է այնպէս, ինչպէս միջնադարում մտածում էին, օրինակ՝ Ներսէս Շնորհալին: Այդ հատկացողութեամբ պահանջում է, որ պրաղայիկ նիւթն ևս բանաստեղծօրէն գրուի, որպէս զի տպաւորութիւն թողնի և երեսաները հեշտ սովորեն:

Ոտիւք չափեալ քերթողական,
Առ անձանձիր վերծանութեան,
Եղեալ ի ձեզ դիմաւանական,
Առ շարժութիւն կրից հոգեկան:

Փէշտիմալճեանը նոյն իսկ իւր լեզուով և ոտանաւորով ևս աղգում է Շնորհալուց. վերջնիս պէս նա շատ պարզ ու վճիռ է գրում. սիրում է ութվանկանի տողեր, և ամբողջ խոշոր հատուածներ մի և նոյն յանգով է վերջացնում. բայց բոլոր երկը նոյն յանգով չի յօրինում, ինչպէս վարւում են Ինճիճեանը և Յովհան Վանանդեցին իւր առաջին գրուածքների մէջ: Նա ճաշակով համեմատաբար բարձր է իւր ժամանակակիցներից:

Չունենալով ոչ մի դադարիս թատերերգութեան մասին՝ Փէշտիմալճեանը յօրինում է մի տեսակ թատերական երկ: Նա ոչ թէ մեկնում կամ պատմում է Քրիստոսի անօրէնութիւնը, այլ դրամատիկական ձևով դործող անձեր է մէջ բերում և միայն նրանց խօսել տալիս, և այս ձևը պահում է սկզբից մինչև վերջը: Դա մի բոլորովին նոր ձև էր մեր դրականութեան մէջ, որ իւր արտաքին նորութեամբ միայն պիտի հաճելի լինէր ժամանակակիցներին: Հենց այս պատճառով և նա իւր երկը կոչում է «Դիմաւանութիւն», որովհետեւ այստեղ մեռած անձերը, և նոյն իսկ երկինք, երկիր, աստղ և այլն կենդանանում և խօսում են իւրեւ կենդանի անձեր: Այս երկը կը դառնար միջնադարեան քրիստոնէական թատերերգութեան նման մի բան, եթէ միայն հեղի-

նախք ներկայացման մասին մտածած լինէր և քիչ ու շատ յարմարեցրած դրանք Բայց նա այդ ձևն ընտրել է միայն աւելի ևս ազդու անելու համար. սուտի և ոչ թէ արարուածների ու տեսարանների է բաժանում նա «Դիմառնութիւնը», այլ մտերի և գլուխներին, որով և նրա երկը ըսնում է մի տեսակ միջին տեղ դրամատիկական ու լիպարկան ձևերի մէջ. մինչդեռ նոյն ժամանակներում Բագրատունու դրուածքն, ինչպէս տեսանք, արտաբոլորաւ դրամատիկական է: Եւ այս հասկանալի է Փէշտիմալ՝ մարձեանը հին մարդ է, երիտասարդ Բագրատունին համեմատաբար նոր, և սրան ծանօթ էր դրամատիկական ձևն օտար դրահանութիւններէ: Դրանց երկերն առաջին ձգտումներն են դրամատիկական տեսակին առաջ բերելու մեր դրահանութեան մէջ, և այս տեսակէտից հետաքրքիր:

Այսպէս, թելադրուած անշուշտ Կտակ-Դրբից, Փէշտիմալ՝ ճեանն առաջին արարուածի առաջին տեսարանի մէջ (հեղինակի առաջին մասի առաջին գլխի մէջ) երևան է հանում Քրիստոսին խաչի վրայ, դեռ չմեռած. Կոյսը խաչի առաջ ողբում է ինքն իրեն և իւր որդուն երկինք ու երկիր կանչելով իրեն սիրովեւ:

Ո՛վ օր սըգոյ, օր մահաբեր,

Սր խաւարի անլոյս գիշեր,

Եհար ըզսիրտ իմ կաշեւէր

Սաստիկ ցաւոց սըրեալ սուտեր:

Աչացըս լոյս եղև ըստուեր,

Շիջաւ յանկարծ սրտիս լապտեր.

Կար զօրութեան իմ կենսաբեր

Բարձաւ յինէն որպէս թէ չէր...

Երկինք, երկիր, լուռ կայք ընդէր,

Փութացարո՛ւք զիս սիրովեւ:

Ձի բաց ի ձէնջ չունիմ ընկեր

Ոչ ի ստորինս և ոչ ի վեր:

Եւ ահա՛ բեմ են մտնում երկինքն ու երկիրն անձնաւորեալ և յուսադրելով Կոյսին՝ յայտնում են, թէ Յիսուս պէտք է խաչուի, որպէս զի մարդկային ազգն ազատուի՝ սատանայի ձեռով անկումից:

Ձի եզիցի մահուան իւր գին

Ազատութիւն մարդկան ազգին:

Այս խօսքի վրայ ներս է մտնում Բանտարկուն և ինքն իրեն արդարացնելով՝ մարդու անկման պատճառը մարդուն իրեն է համարում: Սկսւում է մի վիճաբանութիւն, որի ժամանակ բեմ

են գալիս և մասնակցում վէճին նաև հրեշտակներ, և վերջը Բանտարկուն սախպուած է լինում կասկածելու, թէ մի՞ գուցէ այս Խաչեալը կործանէ իւր իշխանութիւնը և ազատէ իւր կապեալ ոգիները գոթիքի բանդից:

Շարունակութեան մէջ տեսարանն անփոփոխ մի և նոյն է մնում. Կոյսն անգագար ողբում է, գիմելով այն ամենքին, Աստուածաշնչի այն բոլոր անձերին, որոնք ըստ մեկնաբանների որևէ կերպով գուշակել են Քրիստոսի մարգեղութիւնը, և զարմանքով հարցնում է, թէ ինչո՞ւ նրանց գուշակութիւնները չեն կատարուում. իւր որդին ահա՛ խաչում է: Այդ անձերը՝ Պարբէլ հրեշտակ, մոգեր, հովիւներ, եղիսարէթ, Չաքարիա, Յովհաննէս Մկրտիչ, Աիմէոն ծերունի և ուրիշներ, ինչպէս և հին կտակարանի նահապետներ, մարգարէներ և այլք, պարտք են համարում հետզհետէ հանդէս գալ և միմիտարել Կոյսին և յայտնել, թէ այդպէս էլ պէտք է լինի և թէ իրենց մարգարէութիւնից ոչինչ չի վերալիլ, իսկ քահանայապետներն ու դպիրները և հրէից ամբողջ միւս կողմից հրճումներ մէջ են. դեբը սակայն երկիւղով կասկածում են:— Կրօնունոյցն ուրեմն ոչինչ պակաս չի թողնում, ինչ որ Քրիստոսի կեանքին է վերաբերում. երբեմն մանրամասն, երբեմն համառօտ ակնարկներով անցնում է ամեն բան: Սակայն այսպէս լինելով հանդերձ՝ շատ հատուածների մէջ նա իւր երևակայութեամբ կենդանացնում է խօսքն ու նկարագիրը:

Առ քեզ գոչեմ արտառուահոս,
Ե՛կ, մերձաւորդ իմ Ղազարոս.
Տէ՛ս, որ զքեզ ձայնիւ յարոյց,
Ի փայտ մահու լըռէ անխօս: . . .
Դառըն խորշակ հարաւ գըլխոյս.
Եկէ՞զ ըզտունկըս բարերոյս.
Թառամեցաւ ծաղիկն հոգւոյս.
Եղէ ես ծառ պըաղակերոյս:

Իսկ Ղազարոսը օրհնելով նրան՝ պատմում է իւր դրութիւնը՝ գերեզմանի, որ մի և նոյն է գոթիքի մէջ.

Եհաս օրհաս կենաց հիքոյս,
Ժամանեցի ի բանդ անլոյս . . .
Խուժան դիւաց անդընդատոյզ
Պըտուակէին զինև ի խոյզ.
Ըսպառնային ըզցաւս անըոյժ,
Ըզհուր անշէջ, զանմեռ որդունս:
Ուր խանչէին որպէս ըզխոզ

Ամբարշտաց ժողովք յայլ կայս .
 Ի ծով հըրոյ ծըծըմբայոյդ
 Ի լեզ անկեալ որպէս զեռունս :
 Օձք և կարիճք զեղուն թոյնս
 Որպէս ըզգեսա առաաահոս .
 Գաղանք հըրէշք սուր ի լեզուս
 Գիշատէին ըզմեղաւորս . . .

Այս ամենը տեսնելով՝ սարսափած մնում է Ղազարոսը .
 քայց երբ Բրիտանա ձայնում է նրան,

Յայնժամ շարժեալ դրանց դժոխոց
 Խռովեցան անգունդք խորոց,
 Զահի հարեալ գումարք այսոց
 Մատեան միմեանց ի հարց ի վորձ .
 «Այս ի՞նչ, այս ի՞նչ», — ասեն այլոց,
 «Գոչեաց առիւծ անհրադոչ .
 Իբրև ամպրոպ շփոթ ամպոց
 Զամենեսին անլու պակոյց» : —
 Անդ բանտարկուն ասէ նոցին .
 «Զայս մի անգամ լուեալ է իմ
 Մինչ յանէկց ի գոյ եկին
 Երկիր, երկինք, և մեք ի նմին :
 Ահա՛ այս ձայն է Արարչին,
 Որ զըզըզեաց դամենեսին .
 Արդ կասկածիմ եկեալ ինքնին
 Յաւար առցէ զիմ տուն գանձին» :

Գեները խորհուրդ են տալիս Բանսարկունին հաւաքել իւր
 զօրքը և պատերազմի պատրաստուել . նա չի համաձայնում՝ քաջ
 իմանալով Արարչի զօրութիւնը : Այն ժամանակ կատաղում են
 գեները և

Գոռան, խանչեն մուկեղնաձայն,
 «Արդ զիտ հնար, ով գոռ իշխան,
 Պատճառ չարեաց մեր կորստեան» . . .
 Անդ բանտարկուն գոչէ այսոց .
 «Ի դուրս արկէք զՂազարոս .
 Դեռ քառօրեայ չէանց միջոց,
 Էարկ ազմուկ ի տարաւորս» :

Այս խօսքի վրայ մի այլանդակ դե վաղում է դէպի Ղա-
 զարոսը և նրան դուրս ձգում գերեզմանից :

Ասել չի ուղիւ, որ բոլոր անձնաւորութիւնները խրատի-

լաւներ են միայն և ոչ մարդիկ. նրանք ծառայում են լոկ Աստուածորդու մեծութիւնը և մարդեղութեան խորհուրդը բացատրելու համար: Բայց մի վեհ պատկեր է ներկայացնում ինքն Տէրը, այսինքն Յիսուս խաչի վրայ. նա լուռ ամենուրեք է ամենայն համբերութեամբ. քիչ է խօսում է և խօսում է միայն նրա համար, որ ցոյց տայ, թէ որովհետեւ աշխարհի անկումը Բանարկուի հպարտութիւնից ու բմբաստացումից է ծագել, ուստի և ինքը խաչի վրայ ամենամեծ խանարհութեամբ պիտի բարձրացնի անկեալ աշխարհը: Նա մէկ մէկ արտասանում է իւր «եօթն խօսքերը», ինչպէս «Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն» և այլն և բացատրում, թէ ինչպէս արդարութեան օրէնքի տեղ դնում է գթութեան օրէնքը: Մխիթարում է իւր մօրը և քնքշութեամբ հոգում նրա մասին:

Վշտահար մայրը պահում է շարունակ նոյն ողբացող վիճակը. լալիս է իւր և իւր որդու վրայ. գտնում է որդուն. չի կարողանում հասկանալ թէ ինչո՞ւ մարդկային ազգը չպիտի փրկուէր առանց իւր որդու անարգ վիճակին և ամենաքնքշեցիկ: Նրա վիշտն աւելի մեծանում է, երբ յիշում է իւր որդու հրաշագործութիւնները: Նրա դառնալին հեծեծանքը, ողորմալին անհիշելի այն աստիճանի է հասնում, որ նոյն խաչ որդուն խաչի վրայ մոռանալ է ապրիս իւր ցաւերը: Եւ այստեղ, այս սգաւոր մօր ողբի ու բողոքի մէջ Փէշտիմալճեանը մէկ մէկ իսկական քնարերգու է դառնում:

Տեսարանը սկսում է փոխուել միայն այն ժամանակ, երբ Յիսուս վերջին խօսքն է արտասանում:—Երբորդ մօտի սկզբում Բրիտոս արդէն գերեզմանի մէջ է. նա մտնում դժոխք և կործանում շարի իշխանութիւնը: Դժոխքում կապուած հոգիները մէկ մէկ, Ադամից սկսած հէ՛ռ կտակարանի բոլոր յայտնի անձերը միանման կերպով դիմաւորում են Փրկչին, որ նրանց ամենքի հետ կարճ կամ երկար խօսքեր փոխանակելուց յետոյ՝ բանտարկութիւնից ազատում է նրանց: Արդարներից յետոյ առաջ են դալիս մեղաւորներն իրենց լաց ու կոծով, յուսահատութեամբ աղաղակով. սակայն այս շարանին վերջը լռեցնում են գեները, գոչելով.

Կարկեցարձէք, չարեաց դումարք,

Վայրադողանջ շո՛ւնք նեւտահարք:

Այստեղ իսկապէս վերջանում է Բրիտոսի չարչարանքի դիմաւորութիւնը, սակայն կրօնագիտութեան դասագիրքն ամբողջական անելու համար՝ ետեւից դալիս են և երեք պատկերներ Յարութեան, Համբարձման և Հոգւոյ դալստեան համար, որոնք իրարուց անկախ ընաւորութիւն ունին:

Մեր այժմեան պահանջին ի հարկէ փէշտիմալճեանը բաւարարութիւն չի տալ։ Բայց պատմութեան մէջ ամենայն բան իւր տեղում պիտի առնել և այն ժամանակ յաճախ այժմեան անարժէքը ստանում է արժէք՝ դառնալով մի օղակ դէպի կատարելութիւն դիմող զարգացման շղթայի մէջ։ Այս անսահէտից դատելով՝ հասկանալի է լինում, թէ ինչո՞ւ ժամանակակիցները գրաւուել են այդ «մեծիմաստ» և «պերճիմաստ» պատուելի տաղաչափութեամբ։ Բաւական է միայն համեմատենք նրա աղերսները Ղազար Զահեկեցու աղօթքների և կամ իրեն ժամանակակից Գապտափալեան դպրի և Աստապատցի Աբրահամ վարդապետի աղերսների հետ, որպէս զի համադրենք, թէ փէշտիմալճեանն աւելի անկեղծ զգացող է և պարզ ու մաքուր մտածող։ Իսկ նրա «Գիմառնութեան» հետ բնաւ համեմատուել կարող չէ հարիւր տարի առաջ հրատարակուած «Գործք առաքելոցը» Կոմիտաս քահանայի։ Նա մի տոտիճան ազնուացնում է մեր վերածնութեան շրջանի կրօնական բանաստեղծութիւնը և մինչև անգամ ազդում յաջորդների վրայ, ինչպէս Խրիմեան Հայրիկի։ Բայց և այնպէս փէշտիմալճեանն իւր ամբողջ էութեամբ, ինչպէս նկատեցի, մի անսուղ լինելով է, որ հագում մեր միջնադարեան բանաստեղծների կարգին է պատկանում և մի առանձին թարմ երակ չի մտցնում մեր, թէկուզ կրօնական, բանաստեղծութեան մէջ։ Եւ այս հասկանալի է թէ ինչո՞ւ։

* *
*

Մեր հնի վերածնութիւնը և հնի նմանողութիւնը միայն բաւական չէր կենդանի բանաստեղծութիւն առաջ բերելու։ Եւրոպական միտքը պէտք է ներդրօճէր. բայց մինչ այդ եւրոպացոց հետ ունեցած հայոց յարաբերութիւնը արտաքուստ էր, ուստի և ազդեցութիւնը աննշան։

Եւրոպական մտքի իսկական ազդեցութիւնը շատ բնականօրէն սկսում է գաղթաւայրերում և ԴՊՐՈՅՈՎ, և այս միայն 19-րդ դարու առաջին քառորդից։ Արգարե Կ. Պոլսում 18-րդ դարու վերջերից արդէն բացւում են ժողովրդական գպրոցներ, քայքայ քանք հին ձեռք են կազմուած եղել և ժողովրդի մէջ գրագիտութիւն տարածելով հանդերձ՝ հային երկար ժամանակ չեն կարողացել ծանօթացնել եւրոպական քաղաքակրթութեանը։ Դրանց պատուելիները փակուած են մնացել մեր ներքին նեղ շրջանակի մէջ, և միշտ պատկառանքով են նայել դէպի Վենետիկեցիք՝ համարելով նրանց կատարելութիւն և նմանողութեան աղբիւր, չմտածելով անգամ մրցել նրանց հետ։ Ռուսաս-

տանի հայերն աւելի ուշ են կենդանութեան նշան ցոյց տալիս, բայց մը անգամ շարժուելուց յետոյ՝ գլխաւոր հոգսը հենց սկզբից տանում են նոր ձեռով դպրոցներ հիմնելու համար: Աղաբաբեան դպրոցն Ասորականում (1810 թ.), Լաղարեան ճեմարանն (1816 թ.) ու Ներսիսեան դպրոցը (1824 թ.) հաստատուած հայ գաղթալայրերում, յետագայում պիտի իրենց բարբարաւորապէս թիւնն անէին նաեւ բուն երկրի հայ ժողովրդի վրայ, որ 19-րդ դարու առաջին երեսնամեակում դեռ տառապում էր պարսկական և թիւրքական դժպետութիւնների ձեռքին:

Բաւական ժամանակ պիտի անցնէր սակայն, մինչև որ եւրոպական լեզուների և կեանքի ծանօթութիւնը այս նոր դպրոցների միջոցով մի առողջ հոսանք մտցնէր հայ անշարժութեան մէջ և հայ միտքը դուրս գալով ինքնագոհ զրուծիւնից՝ կտրուէր մի միայն մեր միջնադարին նմանելուց և ազդի յառաջագիծութեան էական պայմաններից մէկը համարէր հայ կեանքի մէջ փոխադրելու ամեն ինչ որ եւրոպական է: Եւ այս ձգտումը եւրոպականին նմանելու, որ ծնում էր գաղթալայրերի դպրոցների մէջ, գնալով զօրանում է և կամաց կամաց ներքին բնաւորութիւն է ստանում: Առանց թուլանալու եկեղեցական կրօնական զգացմունքի մէջ՝ մարդիկ տեսնում են, որ եկեղեցուց դուրս ուրիշ բան էլ կայ. և չեն բաւականանում հայ եկեղեցական անցեալով: Հայ միտքը բացւում է, և սովորում են գիտել և ուսումնասիրել կեանքը, բաղդաատութիւն գնել հայի և օտարի ունեցածի մէջ. սրուշում է հայրենասիրութեան գաղափարը, որ հետզհետէ աւելի մեծ ծաւալ է ստանում: Հայրենասիրութիւնը նրանց եռանդ է ներշնչում հայ կեանքը մի նոր ձեռով նորոգելու: Իսկ դրա միջոցներն են համարւում նոր ուսումնական գիտութիւնը, գիտական դրքերի թարգմանութիւնը և վերջապէս լրագրութիւնը:

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ծնունդ է առնում արդէն 18-րդ դարու վերջում: Առաջին ամսագիրը, «Աղդարար» (1794—1796) լոյս է տեսնում Մազրասում Յարութիւն քահանայ Շմաւոնեանի ձեռով, և ապա Վենետիկում հրատարակւում են Ինճիճեանի խմբագրութեամբ «Տարեգրութիւն» (1800—1802) և «Եղանակ Բիւզանդեան» (1803—1820), որոնք տարեթերթ են, այսինքն տարեներ մի գիրք են լոյս ընծայում:

Լրագրութիւնն աղդանիչ էր, որ հայութիւնը իւր նեղ շրջանակից պիտի դուրս գար: Հայը սկսել էր հետաքրքրուել թէ իրենից դուրս, հեռւում ինչ է կատարւում: Ահա «Աղդարարի» ծրագիրը. «Ազդարարդ. յորմէ իմացումն լինելոց է ընթերցողաց ծայրաքաղ աճցնն նոյնոյ ամսոյ, եթէ ի գանազան

կազմեաց, եթէ ի զանազան բարեխաղ և եթէ այլոց զանազան գրոց. նաև բանք հարկաւորք և քաղցրալուրք, և ի վերջնումն տետրակիս՝ զօրացոյց մի հետեւեալ ամսոյ, պարունակեալ ի նմա զաօնոս սրբոց և զաւուրս ծննդեան և լրման լուսնոյ»: ¹⁾ Ինճիճեանի ձեռով խմբագրուած տարեթերթերն ևս մանրամասն տեղեկութիւններ են տալիս նախորդ տարուայ մէջ զանազան երկիրներում կատարուած քաղաքական, եկեղեցական ու գիտական գէպքերի, գիւտերի մասին. գիտելիքներ՝ բժշկական, բնագիտական և այլն: «Ազգարարի» օրացոյցին այստեղ փոխանակում է «գուշակութիւն օգերեոյթ փոփոխութեանց», — կարծես բաւարարութիւն տալու համար մեր պապերի պահանջին, որ չէին կարող ապրել առանց Եփեմերտիական գուշակութիւններին:

1812 թուին Կ. Պոլսում կազմուած է մինչև անգամ «Սրշարունեաց ընկերութիւնը», որ իրեն նպատակ է դնում «ազգին մէջ դրականութեան ոգի զարթուցանել՝ ոչ միայն նախնեաց մատենագրութիւնն ի լոյս ընծայելով, այլ և ազգին օգտակար դրոց հրատարակման ձեռնառու ըլլալով»: ²⁾ Այս ազգասէր ընկերութիւնը իւր ծախքով 1815-ից տպագրում է Ինճիճեանի «Նղանակ Բիւզանդեանը»: Այս ընկերութիւնն է, որ առաջ է բերում և «Դիտակ Բիւզանդեանը» (1812—1816), մի շարաթաթերթ, որ սակայն ոչ Կ. Պոլսում, այլ Վենետիկում Մխիթարեանների ձեռով է խմբագրուած և տպագրուած, անշուշտ այն պատճառով, որ Կ. Պոլսի պատուելիներն ընդունակ չէին լրագիր խմբագրելու: Դա սկզբում զբաղւում է գլխաւորապէս եւրոպական և նոյն իսկ ամերիկեան քաղաքական անցքերով, առանձնապէս Նապոլէոնի արարքների մասին լուրեր տալով, իսկ վերջին երկու տարին, երբ խմբագրում է Չախջախեանը, առանձին տեղ է տալիս նաև ուսումնական և բանասիրական խնդիրներին: Դժբախտաբար, որքան քաղաքական լուրերին ընդարձակ տեղ է տրուած այս լրագրի մէջ. «Ժամանակակից ազգային խնդիրներն և գէպքերը բոլորովին անյիշատակ են թողուած»: ³⁾ Եւ այս հասկանալի է: Մխիթարեանների հռչակը մեծ էր, բայց հեռու Վենետիկը չէր կարող ազգային կեանքը ցոլացնող և կեանքի հետ կապուած լրագիր հրատարակել այդ ժամանակ, մանաւանդ որ, աեսանք, վենետիկեան քերթողներն

1) Գ. Գալմիքեարեան. Պատմութիւն Հայ լրագրութեան, Վիեննա, 1895, Ա. եր. 24.

2) Նոյն, եր. 28.

3) Նոյն եր. 54.

անգամ նոյն միջոցին շատ էլ չէին հետաքրքրւում ազգային ժամանակակից խնդիրներով: Բայց ինչպէս էլ լինի, այս առաջին մենեական լրագիրները, հրատարակուած ռամկական աշխարհաբարով, շատ նպաստել են հայերի աչքը բանալու և օտար ազգերի կեանքին ու գործունէութեանը ծանօթանալու: Եւ եթէ Մխիթարեան խմբագիրներն ազգային կեանքն անուշադիր են թողած, բայց և այնպէս «առաջին անգամ հոս (Դիտակ Բիւզանդեան) կը հանդիպինք ազգային յառաջագիմութեան յորդորակներու, Արշարունեաց ընկերութեան անգամներէն խօսուած»: ¹⁾ Եւ այս շատ էր արդէն:

Այս շարժումը բնականօրէն իւր հետ բերում է և պահանջ մը նոր տեսակի գրականութեան, որ չի եղել հնումը: Դասագրքերի, կրօնական, պատմական և այլ բովանդակութեան գրքերի հետ սկսում են մէկ մէկ երևան գալ և ԲԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ եւրոպական ազգերի գրականութիւնից: 1793 թուին արդէն նոր նախընթանում տպագրւում է Ֆենելոնի Տելեմաքը, որ մի ժամանակ Եւրոպայում ամենից ժողովրդական և տարածուած գիրքն է եղել և իւր խրատական բնաւորութեամբ շատ յարմար էր մեր գրագէտներին այն ժամանակուայ ճաշակին. ուստի և մի քանի ուրիշ թարգմանութիւններ էլ է ունենում յետագայում, երկրորդ անգամ Ջախջախեանի ձեռով Վենետիկում 1826 թուին: Նոյն տեղում մի տարի առաջ տպագրւում է դարձեալ Ջախջախեանի թարգմանութեամբ Գեսների «Մահ Աբելի», որ բնականութիւնից ղուրկի մի հոյուերգութիւն է և արժանացած հայերէն թարգմանութեան անշուշտ նրա համար, որ կրօնական բնաւորութիւն ունի, և որ մեր բանաստեղծներն այն ժամանակ շատ աւելի զրախտով, Ագամ — Եւայով էին հետաքրքրւում քան Հայաստանով: 1824 թուին լոյս է տեսնում Միլտոնի «Դրախտ կորուսեալի» արձակ թարգմանութիւնը Յ. Աւգերեանի ձեռքով: Հնդկաստանի հայերն ևս անմասն չեն մնում այս թարգմանութիւնների մէջ. Կալիաթայում, ուր 1821 թ. հիմնւում է Մարգարաշահական ձեմարանը, 1826-ին Նատորըիանի Ատալան է տպւում, իսկ Մադրասում, 1818-ին՝ Վոլտերի Յուլիոս Կեսարը, և 1812-ին՝ Ֆլորիանի Նումա Պոմպիլիոսը, որ Տելեմաքի յատկութեան մի դիրք է և երկրորդ անգամ արժանանում է թարգմանուելու Ե. Հիւրմիզի ձեռքով: Այս թարգմանութիւնները, գլխաւորապէս կրօնական — բարոյական ուղղութեամբ վիպական երկեր և նոյն իսկ թատ-

4) Նոյն եր. 55.

քերդութիւններ, դանդաղ, բայց անընդհատ շարունակուած են և յետագայում, գլխաւորապէս Վենետիկեցոց ձեռով, որոնք տալիս են հին և ֆրանսիական կլասիկներէից մի քանի կարեւոր երկեր դժբախտաբար գրաւար լեզուով: Եւ այսպիսով նոյն իսկ 19-րդ դարու սկզբներից առաջ է դալիս գեղարուեստական թարգմանական գրականութիւն, որ գոյութիւն չունէր առաջ: Դա արդէն նշան էր, որ հայ գրական միտքը շարժուած էր և պիտի բաժանուէր սքոլաստիկայից և միջնադարեան միակողմանի ու միակերպ պրոդայիկ բանաստեղծութիւնից ու մի նոր ճանապարհով ընթանար: Հարկու գեռ շատ ժամանակ պիտի անցնէր, մինչև որ ճաշակը, գեղարուեստական հասկացողութիւնը դպրոցի և թարգմանութիւնների միջոցով աղնուանար ու բարձրանար և թօթաիելով հինը՝ կարողանար նմանել եւրոպականին և առաջ բերէր մի նոր տեսակի, թէկուզ նմանողական, բանաստեղծութիւն, որ արտայայտիչ լինէր կեանքի, իւր մէջ ցոլացնէր մեր իրականութիւնը և բաւականութիւն տար հասարակութեան ձգտումներին: Ամենից առաջ յաջող կերպով այս բանը կարող էին անել Մխիթարեան բանաստեղծները, որոնք քիչ ու շատ ծանօթ էին եւրոպական բանաստեղծութեանը. բայց նրանք ժողովրդի կեանքով չէին ապրում, ուստի և իրենց ինքնուրոյն երկերի մէջ թոյլ, մանկական ու բաւական պարզամիտ են: Բայց և այնպէս դրանց բանաստեղծութիւնները, ինչպէս և Փէշտիմալճեանինը, եթէ ժամանակին տպագրուած լինէին՝ կաւրող էին որոշ չափով բաւականութիւն տալ ժամանակակիցներին, որոնք այդ նկատմամբ շատ էլ պահանջկոտ չէին: 19-րդ դարու առաջին երեսնամեակում սակայն, որքան գիտեմ, գրեթէ ոչինչ չէ տպագրուած:

* * *

1829 թուին Մոսկովում ՄՈՒԶԱՅԲ ԱՐԱՐԱՏԵԱՆ շատ բան խոտաացող անուան տակ հրատարակում է մի գիրք: Դա Լաւդարեան ճեմարանի ուսների բանահիւսութիւնների ժողովածուն է, որով նրանք եթէ մի կողմից պարծանքով ուղում են ցոյց տալ իրենց յառաջագիմութիւնը «քերթողութեան և ստեղծաբանութեան» մէջ, միւս կողմից «առ հասակակիցս արձակեն զառաջին զայս փունջ բանահիւսութեանց, հրաւիրեալ զնոսա յայս աղբիւր լուսաւորութեան, դալ աջակցել ի քերուբաքանդակ ճախարակութիւն տողաչափութեանց»:

Շատ ընթրոշ է այս կոչը իւր ժամանակի համար: Մարդիկ կը թւում են դպրոցում, կարգում են եւրոպական լեզուներով

բանաստեղծութիւններ, նոյնը որոնում են և հայոց մէջ ու չեն գտնում: Բայց դպրոցը տուել է նրանց ազգի պահպանութիւնը հոգալու միտքը, չեն կարող անտարբեր մնալ: Զկայ բանաստեղծութիւն, բայց պէտք է ստեղծել: Ուրեմն ի՞նչ պէտք է տնել: Պատասխանը շատ պարզ է և երեխայական: — Հարկաւոր է հրաւէր կարգաւ հայ դպրոցների բանաստեղծներին, որ դարձնեն: Եւ այդ անում են Լազարեան սաներն իրենց աշակերտական շարադրութիւններով ու ճարտասանական վարժութիւններով, որոնք անշուշտ որբազրուած ու շինուած են իրենց հայկաբանութեան ուսուցիչ Միքայէլ ծայրագոյն վ. Սալանթեանից:

Այն բաղմամբիւ անուններից, որոնք զրուած են ոտանաւորների տակին, և ոչ մէկն էլ ապագայում գրական շնորհք չեցոյց տուել, որքան յայտնի է. բայց և բոլոր գրածներն էլ աննշան բաներ են. մեծ մասամբ ձօներ՝ Զատիկի, Ծննդեան, նոր տարուայ և այլն առթիւ ուղղուած Լազարեան իշխաններին. մի սովորութիւն, որ տեսանք, միայն այդ Լազարեան սաների մէջ չի եղել և միայն նրանք չեն, որ իրենց երախտաւորներին տուել են այնպիսի մականուններ, ինչպէս՝ աստուածագոյգ, գիւցապատիւ, գիւցաղնափայլ, սխրափայլ դասու գիւցազանց զուգաթոռ, գիւցածնունդ, մեծամեծարար հերոսք, արքայապետի գիւցազանց վեհադնեայ անմահից բարձակից և այլն: Դա ժամանակի ողորմելի ոգու արտայայտութիւնն էր:

Սակայն այսպէս լինելով հանդերձ՝ այդ ժողովածուն մի մանկական թթիւմանք է, որ ցոյց է տալիս, թէ լեզուն պիտի բացուի: Դրա մէջ արդէն երևում է, որ «մուղաները» ոչ միայն բարոյական խրատներ ու Աստուածաշունչ են սիրում և տաղաչափում նրա հատուածներ, այլ և ոգևորում են մեր անցեալով ընդհանրապէս. ունին արդէն հայրենիքի գաղափար, որով պարծենում են, որովհետեւ այդ հայրենիքը զրախան է. ցոյց են տալիս ուսման սէր և ուրախանում են, որ պարսից բռնակալ լծից ազատում է հայ ազգը: Դրանք ոգևորութեան նոր նիւթեր են, որ Լազարեան սաներն առաջարկում են մեր բանաստեղծներին մշակելու, և որոնցով այնուհետեւ պիտի զբաղուէր մեր ապագայ բանաստեղծութիւնը:

Եւ առաջինը, որ նոյն ժամանակներում այս և նման խնդիրներ է նիւթ դարձնում բանաստեղծութեան, է Յովհանն Վանանդեցին, որ թէպէտ Ինձիճեանի ու Փէշաբաճեանի ժամանակակից է և Բաղրատունուց մի սերունդ առաջ մեռած, բայց շատ կողմերով տարբերում է նրանցից և իսկական հիմնադիրն է դառնում մեր նոր ոգւով գրականութեան:

Մ. Արեղեան.